



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԱԹՆ [GATT] ԸՆԴԴԵՄ ՄԱԼԹԱՅԻ

(զանգատ թիվ 28221/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

27 հուլիսի 2010 թվական

ՎԵՐՋՆԱԿԱՆ

27/10/2010

*Վճիռը դարձել է վերջնական Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ
մասի ներքո:*

Translation co-funded
by the European Union



Սույն թարգմանությունը իրականացվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և Եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն թարգմանության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Գաթն [Gatt] ընդդեմ Մալթայի գործով

Եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հադես գալով որպես Պալատ՝ հետևյալ կազմով՝

Նիկոլաս Բրացա [Nicolas Bratza], *Նախագահ*,

Լեխ Գարլիկի [Lech Garlicki],

Ջովանի Բոնելլո [Giovanni Bonello],

Լիլիանա Միյովիչ [Ljiljana Mijović],

Դևիդ Թոր Բյորգվինսոն [Davíd Thór Björgvinsson],

Լեդի Բյանկու [Ledi Bianku],

Միհայ Պոալելունգի [Mihai Poalelungi], *դատավորներ*,

և Լոուրենս Էարլի [Lawrence Early], *բաժանմունքի քարտուղար*,

2010 թվականի հուլիսի 6-ի փակ խորհրդակցությամբ

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվել է նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Գործի հիմքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 34-րդ հոդվածի հիման վրա Մալթայի դեմ 2008 թվականի հունիսի 10-ին Դատարան ներկայացված գանգատն է (թիվ 28221/08) ազգությամբ մալթացի պարոն Լոուրենս Գաթի [Lawrence Gatt] (այսուհետ՝ դիմումատու) կողմից:

2. Դիմումատուի շահերը ներկայացրել է Վալետայում գործող փաստաբան Ջ. Հերերան [J. Herrera]: Մալթայի կառավարության շահերը ներկայացրել է կառավարության Ներկայացուցիչ՝ գլխավոր դատախազ Սիլվիո Կամիլլերին [Silvio Camilleri]:

3. Դիմումատուն պնդել է, որ իր ազատագրվումը, որը հետևանք էր իր նկատմամբ կիրառված գրավի պայմանների խախտման համար երաշխավորված գումարի չվճարման, խիստ էր և անհամաչափ:

4. 2009 թվականի սեպտեմբերի 21-ին չորրորդ բաժանմունքի նախագահը որոշում կայացրեց գանգատը կոմունիկացնել կառավարությանը: Միևնույն ժամանակ, որոշում կայացվեց գանգատն ուսումնասիրել ըստ էության՝ այն համարելով ընդունելի (Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մաս):

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1947 թվականին և ապրում է Մալթայի Մենգլեա քաղաքում:

6. Ներկայումս նա կալանավորված է:

Ա. Գործի նախապատմությունը

7. Որպես քրեական գործեր քննող դատարան հանդես եկող Մագիստրատների դատարանում քննվում էր դիմումատուի գործը թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար:

8. 2001 թվականի օգոստոսի 13-ին դիմումատուի նկատմամբ կիրառվեց գրավը որոշակի պայմաններով, ինչպես նաև մոտ 23,300 եվրո գումարի երաշխավորություն: Ըստ գրավի համար սահմանված պայմաններից մեկի՝ դիմումատուն կարող էր իր բնակության վայրը լքել բացառապես իր որդուն տանից դպրոց և դպրոցից տուն ուղեկցելու նպատակով՝ այդպիսով իրավասու լինելով իր բնակության վայրից դուրս գալ միայն իր որդու ուղեկցությամբ առավոտյան ժամը 6-ից 9-ը և երեկոյան ժամը 3-ից 6-ն ընկած ժամանակահատվածում: 2001 թվականի օգոստոսի 14-ին դիմումատուն ստորագրեց մի հայտարարություն, ըստ որի՝ ինքը համաձայնում էր ստանձնել գրավի պայմաններից բխող վերոնշյալ պարտականությունները, իսկ դրանց խախտման դիմաց վճարել երաշխավորության գումարը: Այնուհետև նա վճարեց 1,165 եվրո դեպոզիտ:

9. Հիմք ընդունելով բողոքն առ այն, որ ինչ-որ օր դիմումատուին տեսել էին Վալետայում երեկոյան ժամը 6-ից 8-ն ընկած ժամանակահատվածում՝ քրեական դատարանն իր 2006 թվականի հունիսի 6-ի որոշմամբ արձանագրեց, որ դիմումատուն խախտել է գրավի պայմաններից մեկը, մասնավորապես, սահմանված ժամին տանը գտնվելու պայմանը: Այդ իսկ պատճառով քրեական դատարանը չեղարկեց գրավը, կայացնելով կալանավորման որոշում, և վճռեց, որ արդեն իսկ վճարված 1,165 եվրոն, ինչպես նաև երաշխավորված 23,300 եվրոն պետք է փոխանցվեն կառավարությանը:

10. Քանի որ դիմումատուն ի վիճակի չէր վճարելու երաշխավորության գումարը, քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածի ներքո դատարանների ռեգիստրի կողմից հարուցվեց վարույթ

պարտքն ազատագրկման փոխակերպելու նպատակով: Ինչպես նախատեսված էր քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածում, կալանավորման մեկ օրվա դրամային արժեքը հավասարեցվում էր 13 եվրոյի (տե՛ս ներքոնշյալ «Վերաբերելի ներպետական օրենք» ենթաբաժինը):

11. 2006 թվականի հուլիսի 28-ին քրեական դատարանը կայացրեց որոշում, որով երաշխավորված գումարը փոխակերպվեց ազատագրկման մեկը օրը հավասարեցնելով 11.50 եվրոյին համարժեք գումարի. այս հաշվարկի պայմաններում կալանավորման ընդհանուր տևողությունը դարձավ երկու հազար օր (ավելի քան հինգ ու կես տարի), իսկ դիմումատուն կալանավորվեց:

Բ. Սահմանադրական վարույթը

12. 2007 թվականի հունիսի 12-ին դիմումատուն դիմել էր Սահմանադրական դատարան՝ պնդելով, որ քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածով և քրեական դատարանի 2006 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածն այնքանով, որքանով այդ դրույթները նախատեսում են խիստ և անհամաչափ պատիժ: Ի տարբերություն օրենքի այլ համանման դրույթների՝ 586-րդ հոդվածը չի նախատեսում ազատագրկման առավելագույն շեմ, ինչը դիմումատուի պարագայում հանգեցրել է նվաստացուցիչ պատժի:

13. 2007 թվականի հոկտեմբերի 19-ին քաղաքացիական դատարանը (առաջին դասի) մերժեց դիմումատուի բողոքը: Այն նկատեց, որ դիմումատուն բողոք չի ներկայացրել Կոնվենցիայի 5-րդ կամ 6-րդ հոդվածների ներքո առ այն, որ սահմանված պայմանները, որոնք իր կողմից կամավոր ընդունվել են և որոնց խախտման դեպքում վրա հասնող հետևանքների մասին ինքն իրազեկ էր, եղել են խիստ. այլ բողոքը ներկայացվել է միայն 3-րդ հոդվածի ներքո առ այն, որ իր պատժի տևողությունը «խիստ» էր և անհամաչափ: Ներպետական դատարանը գտավ, որ պատժի տևողությունն ակնհայտ էր դեռ այն պահից, երբ սահմանվել էր երաշխավորության գումարը. հետևաբար, ինքնակամ այս պայմաններին համաձայնելու հետ մեկտեղ այժմ դիմումատուն չի կարող բողոքել պատժի խիստ լինելուց, քանի որ այն ուղղակիորեն փոխկապակցված էր երաշխավորության գումարի հետ: Բացի այդ, Կոնվենցիան չի երաշխավորում իրավասու դատարանի կողմից կիրառված պատժի տևողության հարցի վիճարկումը, և ոչ մի պարագայում չի ապացուցվել, որ դիմումատուի նկատմամբ

կիրառված պատիժն անցել է 3-րդ հոդվածի շրջանակում ընդգրկվելու համար նախատեսված շեմը:

14. 2008 թվականի փետրվարի 12-ին Սահմանադրական դատարանը մերժեց դիմումատուի ներկայացրած դիմումը: Ներպետական դատարանը գտավ, որ, իրապես, քաղաքացիական դատարանը սխալվել է՝ համարելով, որ խնդրո առարկա կալանավորումը տեղավորվում է 5-րդ հոդվածի 1-ին մասի (ա) կետի ներքո, այն է՝ անձի կալանավորումն իրավասու դատարանի կողմից դատապարտվելուց հետո: Դիմումատուի կալանավորման հիմքը 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետն է, այն է՝ օրենքով նախատեսված պարտականության կատարման ապահովումը: Սա նշանակում է, որ, ըստ Ստրասբուրգի նախադեպային իրավունքի, պետք է առկա լինի ողջամիտ համաչափ հարաբերակցություն ազատությունից զրկման և պարտականության կատարման միջև: Սույն գործում դիմումատուն ստանձնել է պարտականություն՝ գիտակցելով դրանից բխող միանշանակ և ոչ կամայական հետևանքները: Այն փաստը, որ խնդրո առարկա օրենսդրական դրույթով սահմանված չէր վերին շեմ, որևէ կերպ չի ազդել պարտականության և դրանից բխող հետևանքների համաչափության վրա: Անձին իր կողմից չկատարված պարտականությունից ազատելն իմաստագրվում է կալանավորման դեմ կիրառված երաշխավորության նշանակությունը: Այս պատճառաբանումը հավասարապես վերաբերում է Կոնվենցիայի ինչպես 5-րդ, այնպես էլ 3-րդ հոդվածներին: Իրապես, դիմումատուն ոչ վիճարկել է երաշխավորման մեջ նախանշված գումարի չափի համաչափությունը, ոչ էլ պնդել է, որ այն իր ֆինանսական կարողություններին չի համապատասխանում: Ստացվում է, որ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի մասին խոսք լինել չի կարող՝ չնայած այն հանգամանքին, որ խիստ անհամաչափության տարրերի առկայությունը կարող էր խնդրահարույց լինել 3-րդ հոդվածի ներքո (տե՛ս *Léger v. France*, no. 19324/02, 11 April 2006, և *Price v. the United Kingdom*, no. 33394/96, ECHR 2001-VII), սակայն սույն գործում խիստ անհամաչափության մասին խոսք լինել չի կարող:

II. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Քրեական օրենսգրքի 579-րդ հոդվածի, Մալթայի օրենքների 9-րդ գլխի համաձայն՝

«(1) Եթե մեղադրյալը կամ ամբաստանյալը չեն ներկայանում գրավի կիրառման որոշման մեջ նշված մարմնի հանձնարարությամբ կամ չեն կատարում դատարանի կողմից նախանշված պայմաններից մեկը կամ դիմում են փախուստի կամ լքում Մալթայի տարածքը կամ կատարում են որևէ դիտավորյալ հանցագործություն կամ ազդեցություն են գործադրում կամ փորձում են ազդեցություն գործադրել վկաների վրա կամ այլ կերպ խոչընդոտում են կամ փորձում են խոչընդոտել իրենց կամ այլ անձի նկատմամբ իրականացվող արդարադատությունը, գրավի որոշմամբ սահմանված գումարը ենթակա է փոխանցման Մալթայի կառավարությանը, իսկ այդ անձը կալանավորվում է:

Սույն հոդվածը չի կիրառվում, եթե դատարանը գտնում է, որ գրավի կիրառելու որոշմամբ սահմանված պայմանի խախտումն այդքան էլ լուրջ բնույթի չէ:

(2) Յուրաքանչյուր անձ, ով չի կատարում դատարանի կողմից գրավ կիրառելու որոշմամբ սահմանված պայմաններից որևէ մեկը, մեղավոր է համարվում հանցագործության կատարման մեջ, և դատապարտվելիս նրա նկատմամբ կիրառվում է տուգանք (*multa*) կամ վեց ամիսը չզերազանցող ժամկետով ազատազրկվում է կամ երկուսը միաժամանակ, իսկ գրավի որոշմամբ սահմանված գումարը ենթակա է փոխանցման Մալթայի կառավարությանը:

(3) Չնայած ցանկացած օրենքի դրույթներին, յուրաքանչյուր անձ, ով մեղադրվում է 2-րդ ենթահոդվածում նշված որևէ հանցագործության կատարման մեջ ազատազրկվում է, իսկ ոստիկանությունն օրինական կերպով պահանջում է գրավի չեղարկում և անձի ազատազրկում: 2-րդ ենթահոդվածում նշված հանցագործությունների առնչությամբ վարույթը հարուցվում է ոստիկանության կողմից և անմիջապես քննվում դատարանի կողմից:

16. Քրեական օրենսգրքի 585-րդ հոդվածը սահմանում է՝

«(1) 579-րդ հոդվածով նախատեսված գործերի դեպքում գրավ կիրառելու որոշման մեջ սահմանված գումարի վերականգնման համար դատարանը, որի առաջ մեղադրյալը կամ ամբաստանյալն ունեին պարտականություն ներկայանալու, գործի հանգամանքներից ելնելով, մինչ վճարելը կամ կայացնում է կամ կատարում է երաշխավորի նկատմամբ բռնագանձման կամ կալանավորման որոշումը կամ հայտարարում է, որ դեպոզիտը փոխանցվում է Մալթայի կառավարությանը»:

17. Քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածի համաձայն՝

«(1) Գումարի չվճարման համար ազատազրկված յուրաքանչյուր անձի ազատազրկման մեկ օրը հավասարեցվում է տասնմեկ եվրոյի և վաթսուներեք ցենտի (11.65)՝ անկախ այդ անձի՝ մեղադրյալ կամ ամբաստանյալ կամ երաշխավոր լինելու հանգամանքից»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

18. Դիմումատուն բողոքում էր, որ իր գործով քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածի կիրառումը խախտել է Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքը՝ վերջին հաշվով հանգեցնելով խիստ և անհամաչափ պատժի: Նա վկայակոչել է 3-րդ հոդվածը, ըստ որի՝

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

19. Դատարանը, գործի փաստական հանգամանքներին իրավական որակում տալու փորձառություն ունենալով, (տե՛ս *Castravet v. Moldova*, no. 23393/05, § 23, 13 March 2007, *Marchenko v. Ukraine*, no. 4063/04, § 34, 19 February 2009, and *Berhani v. Albania*, no. 847/05, § 46, 27 May 2010), կաշկանդված չէ կողմերի ներկայացված իրավական գնահատականներով: «*Դատարանին են հայտնի օրենքները*» [*jura novit curia*] սկզբունքի ուժով Դատարանը բողոքներ քննելիս սեփական նախաձեռնությամբ անդրադարձել է այնպիսի հոդվածների կամ հոդվածների մասերի, որոնք կողմերը վկայակոչած չեն եղել (տե՛ս *Scoppola v. Italy (no. 2)* [GC], no. 10249/03, § 54, 17 September 2009, and *Anusca v. Moldova*, no. 24034/07, § 26, 18 May 2010): Բողոքը որակվում է փաստական հանգամանքների լույսի ներքո և ոչ թե հիմնվում է բացառապես վկայակոչված իրավական հիմքերի և հիմնավորումների վրա (տե՛ս, օրինակ, *Guerra and Others v. Italy*, 19 February 1998, § 44, *Reports of Judgments and Decisions* 1998-I): Ուստի, ներկա գործում Դատարանը որոշեց դիմումատուի կողմից բարձրացված հարցը քննել նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի և թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի ներքո, ի լրումն 3-րդ հոդվածի (տե՛ս *mutatis mutandis*, *Zehentner v. Austria*, no. 20082/02, § 35, 16 July 2009), և այդ առնչությամբ ստանալ կողմերի դիտարկումները:

20. Ըստ վերաբերելի դրույթների՝

Հոդված 5

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

...

(բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով

նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

...»:

Թիվ 4 արձանագրության 1-ին հոդված

«Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ նա ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն»:

I. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Կառավարությունը ներկայացրել է առարկություն առ այն, որ դիմումատուն իր դիմումի կապակցությամբ չի սպառել ներպետական պաշտպանության միջոցներն այնքանով, որքանով դիմումը ենթակա էր ուսումնասիրման 5-րդ հոդվածի և թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի ներքո: Բանն այն է, որ սահմանադրական դատարանի առջև դիմումատուի բարձրացված բողոքը սահմանափակվում էր միայն 3-րդ հոդվածով, և չնայած ներպետական դատարանները հպանցիկ անդրադարձել էին նաև 5-րդ հոդվածին, սակայն այդ առնչությամբ որևէ որոշում չէին կայացրել: Արդյունքում, պետությունը զրկված է եղել խնդրո առարկա խախտման համար փոխհատուցում տրամադրելու հնարավորությունից:

22. Դատարանը կրկնում է, որ ներպետական միջոցների սպառման պահանջի նպատակը պայմանավորող կողմին հնարավորություն ընձեռելն է, որպես կանոն դատարանների միջոցով, կանխել իրավունքի խախտումները մինչ այդ խախտումների վերաբերյալ պնդումները կներկայացվեն կոնվենցիոն ինստիտուտների առաջ: Սա նշանակում է, որ Դատարանի առջև ներկայացվելիք բողոքը նախևառաջ առնվազն բովանդակային ասպեկտով և ներպետական օրենսդրական պահանջների պահպանմամբ պետք է բարձրացվի ազգային համապատասխան դատարանների առջև (տե՛ս *Gasus Dosier- und Fördertechnik GmbH v. the Netherlands*, 23 February 1995, § 48, Series A no. 306-B).

23. Դատարանը նկատում է, որ սահմանադրական իրավասության ներպետական վարույթի ընթացքում դիմումատուն, վկայակոչելով 3-րդ հոդվածը, բողոքել է իր նկատմամբ կիրառված միջոցի համաչափությունից, այն է՝ վիճարկել է քրեական դատարանի 2006 թվականի հուլիսի 28-ի որոշումը, որով նշանակվել էր երկու հազար օր

ազատագրվում՝ ի համապատասխան քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածի պահանջների:

24. Դատարանը համարում է, որ բողոքները, Դատարանի կողմից դիտարկվելով 5-րդ հոդվածի և թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի ներքո (տե՛ս 19-րդ պարագրաֆ), բխում են ներպետական դատարանների առջև ներկայացված միևնույն փաստերից և հիմնվում են միևնույն հիմնավորումների վրա՝ վերաբերելով կիրառված միջոցի համաչափությանը: Իրապես, Սահմանադրական դատարանն ինքնին անդրադարձ է կատարել համաչափության թեստին 5-րդ հոդվածի ներքո: Ուստի, Դատարանը համարում է, որ սահմանադրական դատարանին հնարավորություն էր վերապահվել տրամադրել փոխհատուցում ենթադրյալ խախտման համար (տե՛ս *mutatis mutandis*, *Gasus Dossier- und Fördertechnik GmbH*, մեջբերված վերևում, § 49):

25. Ստացվում է, որ այս պայմաններում Կառավարության առարկությունները ենթակա են մերժման:

II. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 3-ԸՆԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

26. Դիմումատուն բողոքում էր, որ իր գործով քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածի կիրառումը խախտել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը՝ առաջ բերելով խիստ և անհամաչափ պատժի հիմնախնդիր: Իրապես, 586-րդ հոդվածն ազատագրկման տևողության առավելագույն ժամկետ, որով հնարավոր է փոխակերպել գումարը, չի նախատեսում: Ներկա գործում պատժի խստության (երկու հազար օր ազատագրվում) և թույլ տված խախտման հանրային վտանգավորության (պարետային ժամի չպահպանում) միջև համաչափության հարաբերակցությունը պահպանված չէր: Ավելին, ազատագրկման տևողությունը, ի տարբերություն շատ այլ դեպքերի, ենթակա չէր վերանայման կամ կրճատման լավ վարքագծի հետևանքով:

27. Կառավարությունը ներկայացրեց, որ դիմումատուն կամավոր կերպով է ստանձնել այդ պարտականությունը՝ գիտակցելով, որ դրա խախտումը ենթադրելու է երաշխավորված գումարի փոխակերպում ազատագրկման՝ նախապես որոշված դրույքաչափով: Ավելին, անկախ նրանից խնդրո առարկա վերաբերմունքը հանգեցրել է պատժի թե ոչ, այն ըստ էության չի հատել 3-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար պահանջվող շեմը:

28. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը կոչված է երաշխավորելու ժողովրդավարական հասարակության

ամենահիմնական արժեքներից մեկը: Այն բացարձակապես է արգելում խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ գործի հանգամանքներից և տուժողի վարքագծից: Վատ վերաբերմունքը պետք է հասնի խստության նվազագույն շեմի 3-րդ հոդվածի շրջանակում տեղավորվելու համար: Այս նվազագույնի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը: Դատարանը հետևողականորեն շեշտադրել է, որ պատճառված տառապանքն ու նվաստացումը պետք է ամեն դեպքում գերազանցեն օրինական վերաբերմունքի կամ պատժի կոնկրետ ձևի հետ կապված անխուսափելի տառապանքի կամ նվաստացման սահմանը: Անձի նկատմամբ կիրառվող ազատությունից զրկող միջոցները երբեմն կարող են պարունակել նմանատիպ տարրեր (տե՛ս *Kafkaris v. Cyprus* [GC], no. 21906/04, §§ 95-96, ECHR 2008):

29. Դատարանը, ի գիտություն ընդունելով գործի բոլոր հանքամանքները, չի բացառում, որ անհամաչափ պատժի կիրառումը, կարող է խնդրահարույց լինել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից (տե՛ս *mutatis mutandis*, *Hussain v. the United Kingdom*, 21 February 1996, *Reports* 1996-I, *T. v. the United Kingdom* [GC], no. 24724/94, § 99, 16 December 1999, *V. v. the United Kingdom* [GC], no. 24888/94, § 100, ECHR 1999-IX և *Einhorn v. France* (dec.), no. 71555/01, ECHR 2001-XI). Այդուհանդերձ, պետության դեմ 3-րդ հոդվածի խախտում արձանագրելը բավականաչափ լուրջ է, և խստության նվազագույն աստիճանի առկայությունն անհրաժեշտ է, որպեսզի դիմումը տեղավորվի 3-րդ հոդվածի կարգավորման տիրույթում: Դատարանը նկատում է, որ դիմումատուի ազատազրկման տևողությունը երաշխավորված գումարի չվճարման արդյունք էր: Չնայած ազատազրկումը դիմումատուի համար կարող է սթրեսի և անհանգստության աղբյուր լինել, այդուհանդերձ, դրանք չեն հատել 3-րդ հոդվածի ներքո ընդգրկվելու համար անհրաժեշտ շեմը:

30. Ստացվում է, որ դիմումն անընդունելի է ակնհայտ անհիմն լինելու հիմքով՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով և ենթակա է մերժման՝ ըստ Կոնենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ մասի:

III. ԿՈՆՎԵՆՅԱՅԻ 5-ԸՆԴԴԱԾԻ ԵՆԹԱԴԲՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

Ա. Ընդունելիություն

31. Դատարանը նկատում է, որ այս դիմումը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ակնհայտ անհիմն չէ: Այն նաև նկատում է, որ դիմումն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, դիմումը հայտարարվում է ընդունելի:

Բ. Ըստ էության քննություն

1. Կողմերի պնդումները

32. Դիմումատուն պնդել էր, որ կիրառված միջոցն իր բնույթով պատժիչ էր: Այն նշանակվել էր բացառապես ի հետևանք պայմանագրային պարտավորության չկատարման, ուստի և հակասում էր 5-րդ հոդվածի 1-ին մասին, մասնավորապես, այն անհամաչափ էր: Դիմումատուն ընդգծել էր, որ, ի տարբերություն օրենքում այլ նմանատիպ դրույթների, քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածը չի նախատեսում ազատազրկման առավելագույն շեմ: Բացի այդ, նման հանգամանքներում դիմումատուն զրկված է օգտվել լավ վարքագծի արդյունքում ազատազրկման տևողության կրճատման հնարավորությունից:

33. Կառավարությունը հակադարձել է, որ, ըստ գրավի պայմանների, դիմումատուն ազատազրկվել է 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի երկրորդ նախադասության համաձայն, այն է՝ օրենքով նախատեսված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով, իսկ այդ պարտականությունը ստանձնել էր ինքնակամ: Բացի այդ, կիրառված միջոցը նաև արդյունք էր դիմումատուի՝ դատարանի օրինական կարգադրության չենթարկվելուն, ինչը նույնպես տեղավորվում էր 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի ներքո: Ուստի, այն պատժիչ բնույթի էր: Նման հանգամանքներում այլ բան չկար անելու, քան օրենքով նախատեսված ազատազրկումը կիրառելը:

34. Կառավարությունը նշել է, որ դատարանի կողմից կիրառված գրավի պայմանները կոնկրետ էին, հստակ և միանշանակ: Դրանք ազատության իրավունքը կարևորող անհրաժեշտ միջոցներ էին: Նախատեսված հետևանքների վրա հասնելը պայմանավորված էր

դիմումատուի կողմից կիրառված գրավի պայմաններից առնվազն մեկի խախտմամբ: Դիմումատուն ունեցել է հնարավորություն կատարելու երաշխավորությունը վճարելու դատարանի կարգադրությունը, որի պարագայում նա ազատ կարձակվեր, սակայն չի վարվել այդպես: Այդպիսով, պարտականությունը չի կատարվել առ այսօր: Կառավարությունը նաև նշել է, որ ազատագրկման տևողության կրճատումը վերաբերելի չէ դիմումատուին այնքանով, որքանով նա հնարավորություն ուներ ապահովել իր ազատությունը՝ վճարելով նախատեսված գումարը:

2. Դատարանի գնահատականը

35. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է ազատությունից զրկման թույլատրելի հիմքերի սպառիչ ցանկ: Այդուհանդերձ, հիմքերից մեկի կիրառումն անհրաժեշտաբար չի հանգեցնում մյուս հիմքի կիրառմանը. ազատագրկումը, հանգամանքներից կախված, կարող է հիմնավորվել մեկից ավելի կետերով (տե՛ս, օրինակ, *Eriksen v. Norway*, 27 May 1997, § 76, *Reports* 1997-III, և *Enhorn v. Sweden*, no. 56529/00, § 34, ECHR 2005-I): Դատարանը համարում է, որ այս կանոնը վերաբերում է նաև նույն կետի տարբեր նախադասություններին:

36. Սույն գործում Կառավարությունը գտել էր, որ ազատագրկումը եղել էր 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի առաջին և երկրորդ նախադասություններին համապատասխան:

37. Առաջին նախադասությամբ ազատագրկումը հնարավոր է «դատարանի օրինական կարգադրության չենթարկվելու» դեպքում. կարգադրություն, որն արդեն կայացվել էր անհատի դեմ: Կոնվենցիոն մարմինները սրա տակ ներառել են, այդ թվում, դատական տուգանքը չվճարելու (տե՛ս *Airey v. Ireland*, no. 6289/73, Commission decision of 7 July 1977, *Decisions and Reports* (DR) 8, p. 42), դատարանի կողմից նշանակված բժշկական զննության չենթարկվելու (տե՛ս *X v. Austria*, no. 8278/78, Commission decision of 13 December 1979, DR 18, էջ 154 և *X v. Germany*, no. 6659/74, Commission decision of 10 December 1975, DR 3, էջ 93), երեխային ծնողին հանձնելու որոշմանը չենթարկվելու (տե՛ս *Paradis and Others v. Germany* (dec.), no. 4065/04, 4 September 2007), դատարանի որոշմամբ սահմանված բնակարանի սահմանափակումներին չենթարկվելու (տե՛ս *Freda v. Italy*, no. 8916/80, Commission decision of 7 October 1980, DR 21, էջ 254) և պարտավորեցնող հրամանները չկատարելու դեպքերը (տե՛ս օրինակ

Steel and Others v. the United Kingdom, 23 September 1998, § 69, *Reports* 1998-VII):

38. Դատարանը նկատում է, որ դիմումատուն չի պահպանել դատարանի 2006 թվականի հունիսի 6-ի որոշումը, որով պարտավորվում էր վճարել 23,300 եվրո, ինչն էլ հանգեցրել է ազատագրկման երկու հազար օրով:

39. Ի նկատի ունենալով, որ Կոնվենցիան և կից արձանագրությունները պետք է մեկնաբանվեն ամբողջության մեջ՝ Դատարանն ուշադրության է հրավիրում թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածին, որն արգելում է ազատագրկումը բացառապես պայմանագրային պարտականությունը չկատարելու հիմքով: Դատարանն արդեն իսկ արտահայտել է վերապահումներ «մեխանիկական ազատագրկումների» վերաբերյալ՝ համարելով դա արխայիկ խափանման միջոց (ֆրանսիական համակարգում) (տե՛ս *Göktan v. France*, no. 33402/96, § 51, ECHR 2002-V): Այդուհանդերձ, Դատարանը նկատել է, որ թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածը չի կիրառվի նման համակարգում, քանի որ դրույթն արգելում է պարտքի դիմաց ազատագրկումն այն դեպքերում, երբ պարտքի հիմքը պայմանագրային պարտավորություններն են (տե՛ս *Göktan*, մեջբերված վերևում § 51): Չնայած սույն գործի փաստական հանգամանքները տարբերվում են *Göktan*-ի գործի փաստական հանգամանքներից, և թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում լրացուցիչ քննարկման կարիք ունեն, այնուամենայնիվ Դատարանը պատրաստ է ընդունել, որ Կառավարությունը կարող էր 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի առաջին նախադասությունը դիտարկել որպես դիմումատուի ազատագրկման հիմք:

40. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասն առաջին հերթին պահանջում է, որ ազատագրկումը լինի «օրինական», ինչը ենթադրում է նաև օրենքով նախատեսված ընթացակարգային պայմանների պահպանում: Այս պայմաններում Կոնվենցիան հիմնականում անդրադառնում է ազգային օրենսդրություններին և սահմանում պարտականություն պահպանելու դրանցից բխող նյութական և ընթացակարգային կանոնները: Սակայն, ի լրումն, Կոնվենցիան նաև պահանջում է, որ յուրաքանչյուր ազատագրկում համահունչ լինի 5-րդ հոդվածի նպատակին, մասնավորապես, անհատներին կամայականություններից պաշտպանելու նպատակին:

Ազատագրկման տևողությունն ըստ էության կլինի օրինական, եթե այն համապատասխանում է դատարանի կարգադրությանը (տե՛ս *Benham v. the United Kingdom*, 10 June 1996, §§ 40 և 42, *Reports* 1996-III): Այնուամենայնիվ, ներպետական իշխանությունները պետք է պահպանեն արդարացի հավասարակշռում ժողովրդավարական հասարակությունում դատարանի օրինական կարգադրությունը պահպանելու և ազատության իրավունքի կարևորության միջև (տե՛ս *Paradis and Others*, մեջբերված վերևում): Դատարանը համարում է, որ նման հանգամանքներում այնպիսի գործոններ, ինչպիսիք են կարգադրության նպատակը, կարգադրության կատարման իրագործելիությունը և ազատագրկման տևողությունը, ենթակա են հաշվի առնման: Այս պատկերում առանձնահատուկ նշանակություն է ստանում համաչափության խնդիրը:

41. Դատարանը որպես վեճի առարկա չի դիտարկում այն, որ ազատագրկման հիմքը ներպետական դատարանի որոշումն էր՝ հիմնված քրեական օրենսգրքի 585-րդ հոդվածի վրա, ինչպես նաև այն, որ ազատագրկման տևողությունը նախատեսված էր նույն օրենսգրքի 586-րդ հոդվածով: Մնում է որոշել՝ արդյոք խնդրո առարկա միջոցառումը եղել է համաչափ:

42. Ներպետական դատարանի կարգադրության նպատակն էր գրավի պայմանները խախտելու համար իշխանություններին հասանելիք գումարի վճարման ապահովումը տուգանքի տեսքով: Դատարանը համարում է, որ դրամական երաշխավորությունն անփոխարինելի է ազատության իրավունքի պահպանումը երաշխավորելու տեսանկյունից: Դատարանն, այնուամենայնիվ, նկատում է, որ արդեն 2006 թվականին դիմումատուն ի վիճակի չէր վճարել սահմանված գումարը: Թեպետ դիմումատուն ի վիճակի է եղել վճարել այդ գումարը 2001 թվականին այդ պարտականությունը ստանձնելիս: Իրապես, դիմումատուն ողջամտորեն կարող էր ենթադրել, որ իր նկատմամբ հարուցված վարույթը հինգ տարուց ավել չի տևի: Դատարանը դիտարկում է, որ դիմումատուի նկատմամբ կիրառված գրավի պայմանները, տևելով հինգ տարի, բավական խիստ են եղել (տե՛ս 8-րդ պարագրաֆը): Այդպիսով, ճշմարտանման է եզրակացնել, որ դիմումատուն այդ ժամանակահատվածում ի վիճակի չի եղել ապրուստի միջոց վաստակել: Նման հանգամանքներում, իրատեսական չէր ակնկալել, որ դիմումատուն ի վիճակի էր լինելու պահպանել դատարանի կարգադրությունը:

43. Բացի այդ, Դատարանը նկատում է, որ 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի առաջին նախադասության ներքո ուսումնասիրված գործերում ազատագրկման տևողությունը եղել է կարճ, ինչպես օրինակ, չորս օրը (տե՛ս *Airey*, մեջբերված վերևում) կամ մեկ շաբաթը (տե՛ս *Freda*, և *Steel and Others*, երկուսն էլ մեջբերված վերևում), իսկ առավելագույնը վեց ամիս (տե՛ս *Paradis and Others*, մեջբերված վերևում): Սույն գործում դատարանի կարգադրությունը չպահպանելու համար ազատագրկումը եղել է ընդհանուր չորս ու կես տարի, և նախատեսված էր, որ պետք է տևեր ընդհանուր առմամբ հինգ ու կես տարի: Ավելին, այդ ժամանակահատվածը ենթակա չէր վերանայման կամ կրճատման, ինչպես ենթակա կլինեք այն դեպքերում, եթե դիմումատուն ազատագրկված լինեք դատապարտումից հետո (5-րդ հոդվածի 1-ին մասի (ա) կետ): Ոչ էլ այս ժամանակահատվածը 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքների տիրույթում էր, ինչպես կլինեք այն դեպքերում, եթե դիմումատուն կալանավորված լինեք հանցագործություն կատարելու կասկածանքով (5-րդ հոդվածի 1-ին մասի (գ) կետ): Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը համարում է, որ ազատագրկման այս ժամանակահատվածը, այն է՝ հինգ ու կես տարուց ավել (երկու հազար օր) այն բանի համար, որ դիմումատուն չի վճարել 23,300 եվրո, որն արդյունք էր որպես գրավի պայման կիրառված պարեկային ժամի խախտման, չի ապահովում արդարացի հավասարակշռում ժողովրդավարական հասարակությունում դատարանի օրինական կարգադրության կատարումն ապահովելու և ազատության իրավունքի կարևորության միջև:

44. Ի հետևանք, դիմումատուի ազատագրկման ամբողջ տևողությունը չի կարելի ասել, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից դրան համահունչ էր:

45. Դատարանը, այդուհանդերձ, պետք է հաշվի առնի՝ արդյոք ազատագրկումը համահունչ էր Կոնվենցիայի երկրորդ հիմքին, ինչպես վկայակոչում էր կառավարությունը, այն է՝ 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետին՝ «օրենքով նախատեսված որևէ պարտականության կատարման ապահովման նպատակով»:

46. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 1-ին մասի (բ) կետի երկրորդ նախադասությունը թույլատրում է ազատագրկումն օրենքով նախատեսված որևէ կոնկրետ և հստակ պարտականության կատարումն ապահովելու համար, որն արդեն իսկ դրվել է կոնկրետ անձի վրա: Ձերբակալումն ու կալանավորումը պետք է դրա

կատարումն ապահովելու նպատակ հետապնդեն և չլինեն պատժիչ բնույթի: Ավելին, պետք է պահպանվի արդարացի հավասարակշռում ժողովրդավարական հասարակությունում դատարանի օրինական կարգադրությունը պահպանելու և ազատության իրավունքի կարևորության միջև: Այս գնահատականների համատեքստում համապատասխան օրենսդրությունից ծագող պարտականության բնույթը, ներառյալ դրա հիմքում ընկած առարկան և նպատակը, ազատագրված անձը, ազատագրվմանը հանգեցրած որոշակի հանգամանքներն ու ազատագրվման տևողությունը կարևոր գործոններ են (տե՛ս *Vasileva v. Denmark*, no. 52792/99, §§ 36-38, 25 September 2003):

47. Դատարանը համարում է, որ 2001 թվականի օգոստոսի 14-ին դիմումատուի ստանձնած պարտականությունը վճարել 23,300 եվրո գումար այն դեպքում, եթե նա խախտի գրավի պայմանները, կոնկրետ էր և բավականաչափ հստակ:

48. Ինչ վերաբերում է կալանավորման նպատակին, Դատարանը նկատում է, որ այդ փուլում այն այլևս ի գործու չէր ապահովել գրավի պայմանների իրագործելիությունը, այլ պարզապես երաշխավորում էր երաշխավորված գումարի վճարումը: Դատարանը նախկինում վճռել է, որ չվճարելու դիմաց ազատագրվումը (մաքսային տուգանքների) ոչ թե տուգանքն ապահովելու միջոց է, այլ պատիժ է (տե՛ս *Jamil v. France*, 8 June 1995, § 32, Series A no. 317-B, and *Göktan*, մեջբերված վերևում, § 48), և կառավարությունը նույնպես ընդունել է, որ սույն գործում կիրառված միջոցն իր բնույթով պատժիչ էր (տե՛ս 33-րդ պարագրաֆը): Այս համատեքստում Դատարանը տարբերակման որևէ պատճառ չի տեսնում: Մասնավորապես, այն նկատում է, որ ազատագրվումը, որը կիրառվում է գրավի պայմանների խախտման համար երաշխավորության դիմաց, կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, որում անհատն ազատագրվում է ավելի երկար ժամանակահատվածով, քան այն ժամանակահատվածն է, որ նա կազատագրվեր, եթե մեղավոր ճանաչվեր հանցագործության կատարման համար: Իրավիճակն ավելի պարադոքսալ կլինի, եթե անհատն ի վերջո արդարացվի: Այդուհետ, Դատարանը դժվարանում է ընդունել, որ դիմումատուի ազատագրվումը կարող է ապահովել պարտականության կատարումը, քանի որ վերջինիս ֆինանսական վիճակը (տե՛ս 42-րդ պարագրաֆ) անկասկած կպահպանվի և միանշանակ ավելի կվատանա քանի դեռ նա ազատագրված է:

49. Խոսելով ազատագրկմանը հանգեցրած հանգամանքների մասին՝ Դատարանը նկատում է, որ դիմումատուն, ում նկատմամբ հարուցված էր քրեական գործ թմրանյութերի ապօրինի շրջանառության համար, գրավով, որի պայմաններից էին բնակության սահմանափակումները, ազատ էր արձակվել: Մակայն, այդ պայմանը դիմումատուի կողմից խախտվել էր մեկ անգամ: Որպես արդյունք, դիմումատուն կալանավորվել էր և շարունակում էր կալանավորված մնալ ընդհանուր առմամբ ավելի քան հինգ ու կես տարի (երկու հազար օր), քանի դեռ նա չէր վճարել 23,300 եվրոն: Դատարանը նկատում է, որ մալթական օրենքն այն մասով, որը վերաբերում է այն հանգամանքներին, որոնց դեպքում գրավի պայմանները չպահպանելու հետևանքով գրավի գումարը կփոխանցվի կառավարությանը (քրեական օրենսգրքի 579-րդ հոդված), ոչ մի տարբերակում չի դնում գրավի նախնական նպատակային պայմանների, այն է՝ դատաքննությանը ներկայանալը, և այլ հանգամանքներին վերաբերող պայմանների միջև: Այդուհանդերձ, իշխանությունները հնարավորություն ունեցել են չկիրառել հիշյալ դրույթը բոլոր այն դեպքերում, երբ պայմանների խախտումը լուրջ բնույթի չի կրի: Սույն գործում պայմանների խախտումը վերաբերում էր պարեկային ժամին և կապված չէր գրավ կիրառելու սկզբնական նպատակի հետ, հետևաբար, Դատարանը դժվարանում է հասկանալ իշխանությունների՝ վերաբերելի հոդվածը կիրառելու որոշումը: Ասվածի համատեքստում Դատարանը գտնում է, որ 579-րդ հոդվածի շրջանակում կիրառելի հայեցողության կիրառման համապատասխան ուղեցույցի բացակայության կամ գրավի սկզբնական նպատակով պայմանավորված դրա պայմանների խախտման և այլ հանգամանքների միջև տարբերակման առումով մալթական օրենքը թերի է և ի գործ է հանգեցնելու կամայական և անհամաչափ արդյունքների:

50. Դատարանն ընդունում է, որ դիմումատուի նկատմամբ գրավ կիրառելով, ներպետական իշխանություններն այդպիսով ընդգծել են ազատության իրավունքի կարևորությունը: Դատարանը նաև պատրաստակամ է ընդունել այն, որ ներպետական դատարանը ճիշտ և պատշաճ կերպով է կիրառել փոխակերպման վերաբերելի դրույթները: Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ քրեական օրենսգրքի 586-րդ հոդվածն ազատագրկման համար չի սահմանում տևողության առավելագույն շեմ (տեսականորեն անհատը կարող է ազատագրվել մինչև կյանքի վերջ) կամ համաչափության

զնահատման որևէ կառուցակարգեր չի նախատեսում: Հետևաբար, մալթական օրենքը թերի է այս առումով ևս: Իրապես, սույն գործում օրենքի կիրառումը հանգեցրել է չափազանց երկար ազատազրկման ի հակադրումն այն պարտականության կատարման ապահովման, որի հետևանք էր այդ ազատազրկումը:

51. Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը համարում է, որ սույն գործի հանգամանքների ներքո, և հատկապես ազատազրկման տևողության հաշվառմամբ, դիմումատուի ազատազրկումը եղել է անհամաչափ: Մասնավորապես, դիմումատուի գործում կիրառված օրենքը չէր ապահովում արդարացի հավասարակշռում ժողովրդավարական հասարակությունում դատարանի օրինական կարգադրությունը պահպանելու և ազատության իրավունքի կարևորության միջև:

52. Հետևաբար, Դատարանը վճռում է, որ խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄ

53. Դիմումատուն պնդել էր, որ ինքը զրկվել է ազատությունից ի հետևանք պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովելու դատարանի կարգադրության, որը հակասում է թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածին:

54. Կառավարությունն առարկել էր առ այն, որ ներկա գործում այդ դրույթը կիրառելի չէր, և եթե անգամ կիրառելի լիներ, ապա խախտում առկա չէ:

55. Չանդրադառնալով այն հարցին՝ արդյոք թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է սույն գործում, թե ոչ՝ Դատարանը նկատում է, որ սույն դիմումը սերտորեն կապված է Դատարանի կողմից ուսումնասիրված մեկ այլ դիմումի հետ, և, այդպիսով, ևս պետք է համարվի ընդունելի (տե՛ս, *mutatis mutandis*, *Ezel Tosun v. Turkey*, no. 33379/02, § 27, 10 January 2006):

56. Այնուամենայնիվ, անդրադառնալով 5-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ իր պնդումներին՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում առանձին անդրադառնալ այս հարցին:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

57. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

58. Դիմումատուն չի ձևակերպել 41-րդ հոդվածի հստակ պահանջ և սահմանափակվել է միայն նշելով այն, ինչն իր կարծիքով կլիներ գործի ընդունելի լուծում, այն է՝ կալանավորման տակ անցկացրած ժամանակահատվածի չհաշվարկումն ի վերջո իր նկատմամբ կիրառվելիք ազատագրկում պատժատեսակի ժամանակահատվածի մեջ, իսկ արդարացման դեպքում անօրինական կալանավորման համար փոխհատուցման տրամադրում:

59. Ուսումնասիրելով գործի հանգամանքները՝ Դատարանը համարում է, որ 41-րդ հոդվածի հարցի լուծումը պատրաստ չէ, ուստի այն ենթակա է հետաձգման: Արդարացի փոխհատուցման հարցի լուծման հետագա վարույթ պետք է նշանակվի՝ հաշվի առնելով կողմերի՝ պատասխանող պետության և դիմումատուի մինչև ձեռք բերված համաձայնությունը (Կանոն 75 § 1, Դատարանի կանոնակարգ): Այս կապակցությամբ Դատարանը կարող է միայն արձանագրել, որ դիմումատուի՝ 2006 թվականի հուլիս 28-ից կալանավորված լինելը անհամաչափ է և համահունչ չէ Կոնվենցիայի 5-րդ հոդվածին: Ի նկատի ունենալով 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտմանը վերջ դնելու հրատապ անհրաժեշտությունը (տե՛ս 52-րդ պարագրաֆ)՝ պատասխանող պետությունն ամեն դեպքում պետք է ապահովի դիմումատուին կալանավորումից անմիջական ազատումն այնքանով, որքանով դրա իրավական հիմքը քրեական դատարանի 2006 թվականի հուլիսի 28-ի որոշումն է՝ հիմնված քրեական օրենսգրքի 585-րդ և 586-րդ հոդվածների վրա:

ԱՅՍ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Դիմումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի և թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի ներքո *հայտարարում է* ընդունելի, իսկ դիմումի մնացած մասն՝ անընդունելի:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:
3. Վճռում է, որ անհրաժեշտություն չկա դիմումն ուսումնասիրել Կոնվենցիային կից թիվ 4 արձանագրության 1-ին հոդվածի ներքո:
4. Վճռում է, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածը պատրաստ չէ կիրառության և համապատասխանաբար՝
- (ա) ամբողջությամբ *վերապահում է* նշված հարցը.
 - (բ) *հրավիրում է* կառավարությանն ու դիմումատուին սույն վճիռը վերջնական դառնալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան ներկայացնել իրենց գրավոր փաստարկներն այս հարցի առնչությամբ, մասնավորապես, ծանուցել Դատարանին ձեռք բերված յուրաքանչյուր համաձայնության մասին.
 - (գ) *վերապահում է* հետագա վարույթը և *լիազորում* Պալատի նախագահին անհրաժեշտության դեպքում հարուցել վարույթ²

Կազմված է անգլերեն լեզվով և Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան գրավոր ծանուցված է 2010 թվականի հուլիսի 27-ին:

Լուորենս Էարլի
Քարտուղար

Նիկոլաս Բրացա
Նախագահ